Կարգապահական գործ թիվ ԿԳ-23021

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐՄԵՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Վահե Աստվածատրյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Կարինե Բաղդասարյանի, Միքայել Դանիելյանի, Գուրգեն Թորոսյանի և Հայկ Սահակյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

մասնակցությամբ՝ փաստաբան Արմեն Հարությունյանի,

քննության առնելով փաստաբան Արմեն Սերյոժայի Հարությունյանին (արտոնագիր՝ թիվ 557), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը</u>.**

Լիլիա Վարդանյանը **(այսուհետ նաև՝ Դիմող),** դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետ նաև՝ Պալատ),** հայտնել է, որ իր և փաստաբան Արմեն Հարությունյանի **(այսուհետ նաև՝ Փաստաբան)** միջև կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր:

Դիմողը հայտնել է, որ *2022թ. Փաստաբանի կողմից ներկայացվել է վճռաբեկ բողոք, որը ՀՀ վճռաբեկ դատարանը վերադարձրել է՝ սահմանելով հնգօրյա ժամկետ վճռաբեկ բողոքում նշված թերությունները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար:*

Դիմողի պնդմամբ, *Փաստաբանը հրաժարվել է կրկին բողոք ներկայացնելուց՝ պատճառաբանելով, որ չի կարող նախադեպային գործեր ներկայացնել, ինչպես նաև երեխաների անունից ներկայացված բողոքի թերությունները շտկել:*

Միևնույն ժամանակ Դիմողը հայտնել է, որ պատրաստակամ է եղել վճարելու պետական տուրքը:

Դիմողը հավելել է, որ Փաստաբանը գործի վերաբերյալ իրեն որևէ տեղեկություն չի տրամադրել:

Պալատի նախագահի 04.05.2023 թվականի (ելից՝ թիվ 01/01/509-2023) գրությամբ Դիմողին առաջարկվել է ներկայացնել կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու համար նշանակություն ունեցող տեղեկություններ, այդ թվում՝ համապատասխան նյութեր, ապացույցներ:

11.05.2023թ. Դիմողի կողմից ներկայացվել են թիվ ԵԿԴ/1406/02/15 քաղաքացիական գործով 15.03.2023թ. վճռաբեկ դատարանի որոշման պատճենը՝ վճռաբեկ բողոքը մասով առանց քննության թողնելու և մասով վերադարձնելու մասին, 24.02.2023թ. Փաստաբանի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքի պատճենը, լիազորագրերի պատճենները և փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրերի պատճենները:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 19.06.2023 թվականին Դիմողին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը 29.06.2023թ. բացատրությամբ ըստ էության պնդել է նախկինում ներկայացված դիրքորոշումը, հավելելով, որ *02.05.2020թ. կնքված պայմանագրի շրջանակներում Փաստաբանը պետք է ներկայացներ Դիմողի և նրա անչափահաս երեխաների շահերը թիվ ԵԿԴ/1406/02/15 քաղաքացիական գործի շրջանակներում, սակայն թերություններով է ներկայացրել վճռաբեկ բողոքը, իսկ այն ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից վերադարձնելուց հետո չի վերացրել թերությունները և կրկին ներկայացրել:* Նշված արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանը Դիմողի մասով բողոքը թողել է առանց քննության, իսկ Դիմողի երեխաների մասով կրկին վերադարձրել է թերությունները շտկելու համար:

Դիմողի պնդմամբ, *Դիմողը մի քանի անգամ խնդրել և հիշեցրել է Փաստաբանին ժամկետը բաց չթողնելու համար, սակայն Փաստաբանը վերադարձված վճռաբեկ բողոքը դիմողի երեխաների մասով կրկին չի ներկայացրել, ինչպես նաև դադարել է պատասխանել Դիմողի զանգերին, այն պարագայում, որ պայմանագիրը լուծված չի եղել:*

Դիմողը չի մասնակցել Հանձնաժողովի նիստին:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը, Օրենքի 39.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Փաստաբանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Լիլիա Վարդանյանի դիմումի վերաբերյալ, սակայն Փաստաբանը բացատրություն չի ներկայացրել:

Միաժամանակ, Փաստաբանը 05.06.2023թ. ներկայացրել է դիմում, հայտնելով, որ *Դիմողի գործով զբաղվել է 2015-2016թթ. ընթացքում և այն կապված է եղել համատեղ ամուսնության ընթացքում ձեռք բերված շուրջ 40 անուն շարժական գույքի վերադարձման, ինչպես նաև անշարժ գույքի վերաբերյալ ժառանգության վկայականն անվավեր ճանաչելու պահանջների հետ:*

Փաստաբանի պնդմամբ, *դատական գործը տևել է երկար և իր ջանքերի շնորհիվ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը բեկանել է դատարանի որոշումը և գործը նորից է սկսվել, իսկ շարժական գույքի մասով հայցն ամբողջությամբ բավարարվել է:*

Անդրադառնալով անշարժ գույքի վերաբերյալ գործին, Փաստաբանը նշել է, որ այն տևել է 7-8 տարի, որի ընթացքում նա պայքարում էր նոտարի որոշման անվավեր ճանաչման համար, սակայն ոչ մի դատական ատյան չի բավարարել հայցվորների պահանջները:

Փաստաբանը հայտնել է, որ *մինչ օրս չի հրաժարվել Դիմողին օգնելուց և իրավաբանական ծառայություններ մատուցելուց, 8 տարի աշխատել է գրեթե անվճար և որևէ խնդիր կամ վեճ չի ունեցել Դիմողի հետ:*

Ըստ Փաստաբանի՝ *վերջինս երկու անգամ է ներկայացրել վճռաբեկ բողոք: ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից վճռաբեկ բողոքը՝ Դիմողի մասով, վերադարձնելուց հետո Փաստաբանը կատարել է շտկումները և կրկին ներկայացրել բողոքը, սակայն ՀՀ վճռաբեկ դատարանը թողել է այն առանց քննության, իսկ անչափահասների մասով վերադարձրել, որպեսզի Դիմողը ներկայացներ լիազորագրեր անչափահաս երեխաների կողմից:*

Փաստաբանը հավելել է նաև, որ *դա չէր մտնում իր ծառայությունների մեջ և ինքը 8 տարի ոչ մի նման լիազորություն չի ունեցել և չէր կարող ունենալ, և նրանց/անչափահասների/ անունից հանդես չի եկել:* Միաժամանակ, Փաստաբանը նշել է, որ *վճռաբեկ բողոքում մուտքագրել է անչափահաս հայցվորների անունները, բոլոր ատյաններում նման լիազորություն չեն պահանջել, բացի ՀՀ վճռաբեկ դատարանից:*

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 19.05.2023թ. թիվ 134-Ա/ԿԳ-23021 որոշմամբ փաստաբան Արմեն Հարությունյանի նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ նաև՝ Օրենք)** 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ նաև՝ Կանոնագիրք) 2.7.1, 2.7.2, 3.5.5, 3.6.1 և 3.8.3 ենթակետերի հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

26.05.2023թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Հայկ Ծատուրյանին (**այսուհետ՝ նաև Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Սույն կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 26.07.2023թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված է համարվել, որ թիվ ԵԿԴ/1406/02/15 քաղաքացիական գործով Փաստաբանի կողմից 27.12.2022թ. ներկայացված վճռաբեկ բողոքը ՀՀ վճռաբեկ դատարանը 25.01.2023թ. որոշմամբ վերադարձրել է, թիվ ԵԿԴ/1406/02/15 քաղաքացիական գործով Փաստաբանի կողմից 24.02.2023թ. կրկին ներկայացված վճռաբեկ բողոքը ՀՀ վճռաբեկ դատարանի 15.03.2023թ. որոշմամբ՝ Լիլիա Վարդանյանի մասով թողնվել է առանց քննության իսկ Լիլիա Վարդանյանի անչափահաս երեխաներ Էմմա ու Համիկ Յոլչյանների մասով վերադարձվել է, Փաստաբանի կողմից անչափահասներ Էմմա ու Համիկ Յոլչյանների անունից բերված վճռաբեկ բողոքը ՀՀ

վճռաբեկ դատարանի 15.03.2023թ. որոշմամբ վերադարձվելուց հետո կրկին չի ներկայացվել:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 26.05.2023թ.:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 26.10.2023թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբան ստանձնել է Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանությունը ընդհանուր 2 պայմանագրերի շրջանակներում: Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի բացատրություններով, վերջիններիս միջև 13.10.2016թ. և **02.05.2022թ. (որին ըստ էության վերաբերում են Դիմողի կողմից նկարագրված հանգամանքները)** կնքված պայմանագրերով, ինչպես նաև ընդհանուր թվով 3 լիազորագրերով:

2. 02.05.2022թ. պայմանագրի (**այսուհետ՝ նաև Պայմանագիր**) 1.1-ին կետով սահմանված առարկային համապատասխան՝ **Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը պարտավորվում է մատուցել իրավաբանական ծառայություններ՝ մասնակցել թիվ ԵԿԴ/1406/02/15 քաղաքացիական գործով բոլոր ատյաններում, հանդես գար որպես լիազորված անձ և ներկայացնելու պատվիրատուի շահերը բոլոր ատյանի դատարաններում:** Նշված փաստերը հաստատվում են Դիմողի և Փաստաբանի միջև **02.05.2022թ**. **կնքված պայմանագրով:**

3. Պայմանագրի 2.2-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ ***Պատվիրատուն Կատարողին ապահովում և հաղորդում է գործի վերաբերյալ բոլոր փաստաթղթերով և տեղեկատվությամբ:*** Նշված փաստերը հաստատվում են Դիմողի և Փաստաբանի բացատրություններով, ինչպես նաև վերջիններիս միջև **02.05.2022թ. կնքված պայմանագրերով:**

4. Թիվ ԵԿԴ/1406/02/15 քաղաքացիական գործով Փաստաբանի կողմից 27.12.2022թ. ներկայացված վճռաբեկ բողոքը ՀՀ վճռաբեկ դատարանը 25.01.2023թ. որոշմամբ վերադարձրել է:

5. Թիվ ԵԿԴ/1406/02/15 քաղաքացիական գործով Փաստաբանի կողմից 24.02.2023թ. կրկին ներկայացված վճռաբեկ բողոքը ՀՀ վճռաբեկ դատարանի 15.03.2023թ. որոշմամբ՝ Լիլիա Վարդանյանի մասով թողնվել է առանց քննության իսկ Լիլիա Վարդանյանի անչափահաս երեխաներ Էմմա ու Համիկ Յոլչյանների մասով վերադարձվել է: *Նշված փաստը հաստատվում է թիվ ԵԿԴ/1406/02/15 քաղաքացիական գործի վերաբերյալ «դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով:*

6. ՀՀ վճռաբեկ դատարանը 15.03.2023թ. որոշմամբ նշել է հետևյալը. *բողոքը կրկին ներկայացնելիս* ***թույլ է տրվել նոր խախտում, այն է՝*** *<u>բողոք բերած անձի կողմից ներկայացվել է վճռաբեկ բողոք բերելու համար օրենքով սահմանված պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ միջնորդությունը,</u> որը ենթակա է մերժման:* Նշված փաստը հաստատվում է թիվ ԵԿԴ/1406/02/15 քաղաքացիական գործի վերաբերյալ

«դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով:

7. Փաստաբանի կողմից անչափահասներ Էմմա ու Համիկ Յոլչյանների անունից բերված վճռաբեկ բողոքը ՀՀ վճռաբեկ դատարանի 15.03.2023թ. որոշմամբ վերադարձվելուց հետո կրկին չի ներկայացվել: *Նշված փաստը հաստատվում է թիվ ԵԿԴ/1406/02/15 քաղաքացիական գործի վերաբերյալ «դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկություններով:*

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի շրջանակներում՝ Դիմողի և Փաստաբանի բացատրություններով, ինչպես նաև դրանց կից ներկայացված նյութերի ուսումնասիրության արդյունքում **հաստատված չեն համարվում** հետևյալ հանգամանքները.

1. Փաստաբանի կողմից ՀՀ վճռաբեկ դատարանի 15.03.2023թ. որոշումը ստանալու և **Դիմողի կողմից Փաստաբանին հաղորդելու** ՀՀ վճռաբեկ դատարանի 15.03.2023թ. որոշման մասին **և այդ որոշմանը** ժամանակին ծանոթանալու **ողջամիտ հնարավորությունը Փաստաբանին ապահովելու հանգամանքը:**

2. Դիմողին հանձնարարության կատարման ընթացքի մասին կանոնավորապես տեղեկացնելու և նրան հետաքրքրող հարցերին պատասխանելու հանգամանքը: *Նշվածի կապակցությամբ Դիմողի և Փաստաբանի բացատրություններում առկա են հակասություններ, իսկ նշված պնդումներն ինքնին չեն կարող վկայել տեղեկացնելու կամ չտեղեկացնելու փաստի մասին:*

3. Փաստաբանի կողմից Դիմողին իրավական օգնություն ցույց տալու պայմանագրից հրաժարվելու հանգամանքը: *Նշվածի կապակցությամբ Փաստաբանը հայտնել է, որ շարունակում է ցուցաբերել իրավական օգնություն, իսկ կնքված պայմանագրերը գործում են անժամկետ (ըստ էության պայմանագրի առարկայի սահմաններում):*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Արմեն Հարությունյանը փաստաբան է հանդիսանում 20.10.2006 թվականից, և 2018-2023թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ (մինչ այդ նշանակված տույժերը համարվում են մարված):

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Արմեն Սերյոժայի Հարությունյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.1, 2.7.2, 3.5.5, 3.6.1 և 3.8.3 ենթակետերի հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով:*

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:*

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված վավերապայմաններն իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Այս համատեքստում, կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում փաստաբանի վարքագծում համապատասխան խախտումների հատկանիշների առկայության ապացուցման հանգամանքը, ինչի անտեսումը կամ չապահովումը թույլ է տալիս եզրակացնել փաստաբանի վարքագծում առերևույթ խախտման հատկանիշների բացակայության մասին, քանի որ դրանք չեն հաստատվել վարույթի ընթացքում: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր կողմ պարտավոր է ապացուցել իր կողմից վկայակոչված հանգամանքները, կրում է դրանք ապացուցված չլինելու բացասական հանգամանքները, իսկ փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են վերջինիս օգտին:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և

(կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

7.1. Կանոնագրքի 2.7.1 ենթակետերի առերևույթ խախտման մասով Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում արձանագրել հետևյալը.

Կանոնագրքի 2.7.1 ենթակետի համաձայն՝ *փաստաբանական գործունեության հասարակական-իրավական նշանակությունը փաստաբանից պահանջում է* ***բարձր մասնագիտական պատրաստվածություն, օրենսդրության իմացություն*** *և գործնական փորձ,* ***փաստաբանական գործունեության մարտավարության մեթոդների և միջոցների,*** *ինչպես նաև հռետորական արվեստի տիրապետում:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 393-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին և 2-րդ նախադասությունների համաձայն՝ ***վճռաբեկ բողոքին կցվում է օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքը վճարած լինելը հավաստող փաստաթղթի բնօրինակը*** *(…) Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարման գծով արտոնություն, ապա* ***վճռաբեկ բողոքին կցվում է կամ բողոքում ներառվում է դրա վերաբերյալ միջնորդությունը,*** *եթե բողոք բերողն օրենքի ուժով ազատված չէ պետական տուրք վճարելու պարտականությունից:*

ՀՀ սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ ***յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված*** *հարկեր,* ***տուրքեր,*** *կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:*

Կանոնագրքի 3.3.1. ենթակետի համաձայն՝ *հոնորարի չափի մեջ չի ներառում փաստաբանի կատարած այլ ծախսերը, որոնք անհրաժեշտ են հանձնարարության կատարման համար (մասնավորապես՝ տրանսպորտային, թարգմանչական կամ մասնագետներին հրավիրելու, տպագրության, պատճենահանման, փոստային և նոտարական ծախսերը, ինչպես նաև* ***այլ դատական ծախսերը****),* ***եթե կողմերի համաձայնությամբ այլ բան չի նախատեսվել:***

Օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***դատական ծախսերը կազմված են պետական տուրքից*** *և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:*

Օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ ***վճռաբեկ բողոքը թողնվում է առանց քննության, եթե՝*** *չեն վերացվել վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ նշված թերությունները, կամ* ***բողոքը կրկին ներկայացնելու դեպքում թույլ են տրվել նոր խախտումներ:***

Վերը նշված իրավական նորմերի և Կանոնագրքի կանոնի տառացի վերլուծության և համակարգային մեկնաբանման արդյունքում, Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ փաստաբանը պետք է ունենա բարձր մասնագիտական պատրաստվածություն և գործնական փորձ, իմանա օրենսդրությունը, տիրապետի փաստաբանական գործունեության մեթոդներին, միջոցներին և հռետորական արվեստին:

Միաժամանակ Փաստաբանը վճռաբեկ բողոքը ներկայացնելիս պարտավոր է թույլ չտալ նոր խախտումներ: Ընդ որում յուրաքանչյուր անձի պետական տուրք վճարելու սահմանադրական պարտականության կատարման դրսևորման մասնավոր դեպքերից է

վճռաբեկ բողոքը ներկայացնելիս բողոքին կցել պետական տուրքի վճարման անդորրագրի բնօրինակը ներկայացնելը կամ պետական տուրքի արտոնություններից օգտվելու համար համապատասխան միջնորդություն ներկայացնելը: Միջնորդության հիմնավորվածության հարցը յուրաքանչյուր գործով գնահատում է դատարանը:

Հարկ է նկատի ունենալ, որ պետական տուրքը վճարելու պարտականությունը կրում է դատավարության կողմը կամ վստահորդը, եթե վստահորդի և փաստաբանի միջև կնքված պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Տվյալ դեպքում Փաստաբանին Կանոնագրքի 2.7.1 ենթակետով կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը որոշելու համար Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում պատասխանել հետևյալ հարցին.

Արդյո՞ք փաստաբան Արմեն Հարությունյանը ունեցել է բարձր մասնագիտական պատրաստվածություն և տիրապետել է գործով օրենսդրության պահանջներին այն պարագայում, երբ փաստաբան Արմեն Հարությունյանի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքը թողնվել է առանց քննության:

Պատասխանելով վերը նշված հարցին՝ Հանձնաժողովը հարկ է համարում նշել հետևյալը.

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանը 15.03.2023թ. որոշմամբ Փաստաբանի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքը Դիմողի մասով թողնվել է առանց քննության: Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու պատճառ է եղել պետական տուրքը չվճարելու պարագայում, պետական տուրքի վճարումը հետաձգելու անհիմն միջնորդություն ներկայացնելը:

Մասնավորապես Հանձնաժողովը հարկ է համարում նշել, որ Դիմողի թիվ ԵԿԴ/1406/02/15 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանը **(այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)** 15.03.2023թ. որոշմամբ նշել է հետևյալը. *բողոքը կրկին ներկայացնելիս* ***թույլ է տրվել նոր խախտում, այն է՝*** *<u>բողոք բերած անձի կողմից ներկայացվել է վճռաբեկ բողոք բերելու համար օրենքով սահմանված պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ միջնորդությունը,</u> որը ենթակա է մերժման:*

Թեև Վճռաբեկ դատարանն իր որոշմամբ մասով առանց քննության է թողել վճռաբեկ բողոքն այն հիմքով, որ կրկին վճռաբեկ բողոք ներկայացնելիս թույլ է տրվել նոր խախտում, այն է՝ ներկայացվել է պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին անհիմն միջնորդություն, այնուամենայնիվ Հանձնաժողովն արձանագրում է, որ պետական տուրքի վճարումը հետաձգելու միջնորդությունը բավարարելու հարցը որոշելու համար դատարանը **գնահատում է** միջնորդությունը ներկայացնելու պահին միջնորդություն ներկայացնող անձի գույքային դրությունը: Յուրաքանչյուր կոնկրետ դատական գործով դատարանը գնահատում է նշված փաստը: Եթե դատարանը, գնահատելով անձի գույքային դրությունը, հանգում է այն եզրակացության, որ առկա չեն հիմքեր պետական տուրքի վճարումը հետաձգելու միջնորդությունը բավարարելու համար, ապա դատարանը մերժում է այն վրա հասնող բոլոր բացասական հետևանքներով: Միջնորդությունը բավարարելու հիմքերի բացակայության պայմաններում, դատարանի կողմից Վճռաբեկ դատարանի կողմից միջնորդությունը ներկայացնող անձ Դիմողի համար անբարենպաստ որոշման կայացումը կախված չէ Փաստաբանի կամքից, նրա գիտելիքներից, մասնագիտական պատրաստվածությունից, օրենսդրության իմացությունից կամ Փաստաբանի ձեռնահասությանը վերաբերվող այլ հանգամանքներից:

Տվյալ դեպքում, Փաստաբանը չի կարող կարգապահական տույժի ենթարկվել ձեռնհասություն չունենալու համար, երբ Դիմողը չի կատարում պետական տուրքի վճարման իր սահմանադրական պարտականությունը: Ավելին, Փաստաբանի օրենսդրության տիրապետելու և բարձր մասնագիտական պատրաստվածություն ունենալու մասին է վկայում վերջինիս կողմից պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին միջնորդություն ներկայացնելը, որը մերժվել է իր կամքից անկախ հանգամանքներում:

Հետևաբար, տվյալ իրավիճակում Փաստաբանը ոչ միայն թույլ չի տվել Օրենքի և Կանոնագրքի խախտում, այլ նաև առավելագույն ջանքեր է գործադրել վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու խնդրին այլընտրանքային լուծում տալու համար:

Հանձնաժողովը հարկ է համարում նաև անդրադառնալ այն հարցին, որ Դիմողն իր բացատրությամբ նշել է, որ պատրաստակամ էր վճարելու պետական տուրքը: Սակայն, Դիմողի այդ փաստարկը հերքվում է Վճռաբեկ դատարանի 15.03.2023թ. որոշմամբ: Եթե Դիմողն իսկապես պատրաստակամ լիներ կատարելու իր սահմանադրական պարտականությունը, այն է վճարելու պետական տուրքը, ապա վճռաբեկ բողոքն այդ հիմքով չէր թողնվի առանց քննության: Տվյալ իրավիճակում դատական ծախսի պետական տուրքի վճարման պարտականությունը կրում է Դիմողը, քանի որ Դիմողի և Փաստաբանի միջև կնքված Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Հիմք ընդունելով վերոգրյալը Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանը դրսևորել է օրենսդրության իմացություն և մասնագիտական բարձր պատրաստվածություն: Հետևաբար Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության Կանոնագրքի 2.7.1 ենթակետերով:

7.2. Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերի առերևույթ խախտման մասով Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում արձանագրել հետևյալը.

Կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է **իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն,** վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, **հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:***

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Կանոնագրքի վերը նշված կանոնների և Պայմանագրի դրույթի տառացի և համակարգային մեկնաբանությունից պարզ է դառնում, որ փաստաբանն իր

մասնագիտական պարտականությունների կատարման շրջանակներում պարտավոր է իր վստահորդին բարեխիղճ իրավաբանական օգնություն ցույց տալ:

Տվյալ դեպքում Փաստաբանին Կանոնագրքի 2.7.2 և 3.5.3 ենթակետերով կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը որոշելու համար Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում պատասխանել հետևյալ հարցին.

Արդյո՞ք փաստաբան Արմեն Հարությունյանը բարեխիղճ իրավաբանական օգնություն է ցույց տվել իր վստահորդին:

Պատասխանելով վերը նշված հարցին՝ Հանձնաժողովը հարկ է համարում նշել հետևյալը.

Փաստաբանի և Դիմողի միջև կնքված **Պայմանագրի 2.2-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝** *պատվիրատուն Կատարողին ապահովում և հաղորդում է գործի վերաբերյալ բոլոր փաստաթղթերով և տեղեկատվությամբ:*

Ըստ Պայմանագրի Դիմողը պարտավոր է Կատարողին ապահովել և հաղորդել բոլոր փաստաթղթերով և անհրաժեշտ տեղեկատվությամբ: Պայմանագիրը ստորագրելով Դիմողը պարտականություն է ստանձնել յուրաքանչյուր փաստաթուղթ, այդ թվում՝ Վճռաբեկ դատարանի որոշումը ստանալու դեպքում, ոչ միայն տեղեկացնել կամ հաղորդել դրա մասին Փաստաբանին, այլ նաև ապահովել Փաստաբանի կողմից այդ փաստաթղթի ստացումը: Տվյալ դեպքում Վճռաբեկ Դատարանի 15.03.2023թ. որոշմամբ Էմմա և Համիկ Յոլչյանների մասով վճռաբեկ բողոքը վերադարձրել է: Փաստաբանը կարգապահական նիստի ընթացքում նշել է, որ Վճռաբեկ դատարանը որոշման մասին ծանուցել է միայն Դիմողին: Դիմողը որևէ կերպ չի առարկել այդ փաստը: Չի մասնակցել կարգապահական հանձնաժողովի նիստին: Դիմողը սույն կարգապահական վարույթի ընթացքում չի ներկայացրել որևէ ապացույց, որ Փաստաբանը ստացել է Վճռաբեկ Դատարանի 15.03.2023թ. որոշումը:

Կարգապահական հանձնաժողովի նիստի ընթացքում Փաստաբանը նաև հայտնել է, որ Վճռաբեկ Դատարանի 15.03.2023թ. որոշման մասին իմացել է միայն այն ժամանակ, երբ բողոքը կրկին ներկայացնելուց 5 օրյա ժամկետն արդեն իսկ լրացած է եղել:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Դիմողի **կողմից Փաստաբանին չի հաղորդվել** ՀՀ վճռաբեկ դատարանի 15.03.2023թ. որոշման մասին **և չի ապահովվել Փաստաբանի այդ որոշումը** ժամանակին ծանոթանալու **ողջամիտ հնարավորությունը**, ինչով և դիմողը խախտել է Պայմանագրի 2.2-րդ կետի «բ» ենթակետը:

Նման պայմաններում Փաստաբանը ողջամտորեն զրկված է եղել վճռաբեկ բողոք կրկին ներկայացնելու հնարավորությունից: Եթե անգամ այն ներկայացվեր 5-օրյա ժամկետի խախտմամբ, ապա բաց թողնված ժամկետը չէր կարող վերականգնվել այն հիմքով, որ Դիմողը խախտել է Պայմանագրի 2.2-րդ կետի «բ» ենթակետը:

Հետևաբար, Փաստաբանը չի կարող կարգապահական տույժի ենթարկվել բարեխիղճ իրավաբանական օգնություն ցույց չտալու համար, եթե վճռաբեկ բողոք ներկայացնելու ժամկետը բաց է թողնվել Դիմողի մեղքով, Դիմողի կողմից Պայմանագրի 2.2-րդ կետի «բ» ենթակետը խախտելու պատճառով:

Բացի այդ, Դիմողի կողմից չի ներկայացվել որևէ ապացույց Վճռաբեկ դատարանի որոշումը ժամանակին փաստաբանին տրամադրելու փաստի հաստատման վերաբերյալ:

Հիմք ընդունելով վերոգրյալը Հանձնաժողովը հարկ է համարում նշել, որ Փաստաբանի արարքում առկա չեն բարեխիղճ իրավաբանական օգնություն ցույց չտալու

կարգապահական խախտման հատկանիշներ: Հետևաբար, Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության Կանոնագրքի 2.7.2 և 3.5.3 ենթակետերով:

7.3. Կանոնագրքի 3.6.1 ենթակետերի առերևույթ խախտման մասով Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում արձանագրել հետևյալը.

Կանոնագրքի 3.6.1-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է* ***անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ*** *սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած* ***կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:***

Վերը նշված Օրենքի իրավական նորմի և Կանոնագրքի կանոնի տառացի վերլուծության և համակարգային մեկնաբանության արդյունքում Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ փաստաբանը պետք է իր վստահորդին պատշաճ կերպով տեղեկացնի գործի ընթացքի մասին և պատասխանի տվյալ գործի հետ կապված իր վստահորդին հետաքրքրող բոլոր հարցերին: Միաժամանակ Փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ: Փաստաբանի կողմից առերևույթ կատարված կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված բոլոր կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:

Տվյալ դեպքում Փաստաբանին Կանոնագրքի 3.6.1 ենթակետերով կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը որոշելու համար Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում պատասխանել հետևյալ հարցին.

Արդյո՞ք փաստաբան Արմեն Հարությունյանը վստահորդին կանոնավորապես տեղեկացրել է հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:

Պատասխանելով վերը նշված հարցին՝ Հանձնաժողովը հարկ է համարում նշել հետևյալը.

Ինչ վերաբերում է Դիմողին հանձնարարության կատարման ընթացքի մասին կանոնավորապես տեղեկացնելու և նրան հետաքրքրող հարցերին պատասխանելու հանգամանքին, ապա Դիմողի կողմից չի ներկայացվել որևէ ապացույց նշված խախտման հաստատման վերաբերյալ: Նման պայմաններում բոլոր սույն կարգապահական չփարատված կասկածները պետք է մեկնաբանվեն Փաստաբանի օգտին:

Հիմք ընդունելով վերոգրյալը սույն գործով ապացուցված չէ Փաստաբանի կողմից հանձնարարության կատարման ընթացքի մասին Դիմողին կանոնավորապես չտեղեկացնելու փաստը: Հետևաբար Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության Կանոնագրքի 3.6.1 ենթակետերով:

7.4. Կանոնագրքի 3.8.3 ենթակետերի առերևույթ խախտման մասով Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում արձանագրել հետևյալը.

Կանոնագրքի 3.8.3-րդ ենթակետի համաձայն՝ ***փաստաբանի կողմից իրավական***

օգնություն ցույց տալու պայմանագրի կատարումից հրաժարվելու դեպքում *փաստաբանը պարտավոր է բացատրել վստահորդին իրավական օգնություն ցույց տալու պայմանագրից հրաժարվելու պատճառները և զերծ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են վնասել վստահորդի շահերին:* ***Փաստաբանն իրավունք չունի թողնել գործը այնպիսի ձևով և այնպիսի հանգամանքներում, որի արդյունքում վստահորդը կարող է հայտնվել անելանելի դրության մեջ և ժամանակին չստանալ այլ իրավական օգնություն:*** *Եթե փաստաբանը, ցանկանում է հրաժարվել իրավական օգնություն ցույց տալու պայմանագրից դատարանի վճռի, դատավճռի կամ դատական այլ ակտի բողոքարկման համար նախատեսված վերջնաժամկետից յոթ օրը չգերազանցող ժամկետում, իսկ վստահորդը հնարավորություն չունի այդ կարճ ժամկետում օգտվել այլ փաստաբանի իրավական օգնությունից, ապա փաստաբանը պարտավոր է այդ փուլում իրավական օգնություն ցույց տալը շարունակել և կատարել իրավական օգնության պայմանագրով նախատեսված իր պարտականությունները՝ պատշաճ կարգով,* ***ինչից հետո հրաժարվել պայմանագրից:***

Կանոնագրքի վերը նշված նորմից պարզ է դառնում, որ եթե փաստաբանը հրաժարվում է իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի կատարումից, փաստաբանն իրավունք չունի վստահորդի գործը թողնել այնպիսի վիճակում, որի արդյունքում վստահորդը կարող է հայտնվել անելանելի դրության մեջ և օբյեկտիվորեն զրկվել ժամանակին անհրաժեշտ իրավական օգնությունը ստանալու հնարավորությունից:

Տվյալ դեպքում Փաստաբանին Կանոնագրքի 3.8.3 ենթակետերով կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը որոշելու համար Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում պատասխանել հետևյալ հարցին.

• ***Արդյո՞ք փաստաբան Արմեն Հարությունյանը գործը թողել է այնպիսի ձևով և այնպիսի հանգամանքներում, որի արդյունքում վստահորդը հայտնվել է անելանելի դրության մեջ:***

Պատասխանելով վերը նշված հարցերին՝ Հանձնաժողովը հարկ է համարում նշել հետևյալը.

Հանձնաժողովը հարկ է համարում արձանագրել, որ Փաստաբանն իրավունք չունի թողնել գործը այնպիսի ձևով և այնպիսի հանգամանքներում, որի արդյունքում վստահորդը կարող է հայտնվել անելանելի դրության մեջ և ժամանակին չստանալ այլ իրավական օգնություն, ***փաստաբանի կողմից իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի կատարումից հրաժարվելու դեպքում:***

Հանձնաժողովը անդրադառնալով Փաստաբանի կողմից Դիմողին առերևույթ անելանելի դրության մեջ դնելու հանգամանքին, անհրաժեշտ է համարում ընդգծել, որ կողմերի մեջ կնքված Պայմանգիրը չի լուծվել, իսկ Փաստաբանը ոչ թե հրաժարվել է իր վստահորդին օգնություն ցույց տալուց, այլ փաստացի զրկված է եղել այդ հնարավորությունից, քանի Վճռաբեկ դատարանը որոշման մասին ծանուցել է միայն Դիմողին, իսկ վերջինս իրազեկել է Փաստաբանին դատարանի կողմից թերությունների շտկելու համար սահմանված ժամկետի ավարտից հետո:

Դիմողն իր դիմումում ևս նշում է, որ **Պայմանագիրը լուծված չի եղել:**

Հիմք ընդունելով վերոգրյալ, Փաստաբանը չի թողել գործն այնպիսի ձևով և այնպիսի հանգամանքներում, որի արդյունքում Դիմողը հայտնվել է անելանելի դրության մեջ: Ավելին՝ Փաստաբանը չէր կարող գործը թողնել այդպիսի ձևով և հանգամանքներում,

որովհետև Պայմանագիրը լուծված չի եղել և Պայմանագրի գործողությունը շարունակվել է:

Հետևաբար, Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության Կանոնագրքի 3.8.3 ենթակետերով:

Հաշվի առնելով ողջ վերոգրյալը, ինչպես նաև գործում առկա ապացույցները իրենց համակցությամբ գնահատելով, Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանին վերագրվող 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես Կանոնագրքի 2.7.1, 2.7.2, 3.5.5, 3.6.1 և 3.8.3 ենթակետերի պահանջների խախտման մասով բացակայում են դրա առերևույթ հատկանիշները, որպիսի պայմաններում էլ հիմնավորված չէ Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն կարգապահական գործի շրջանակներում բացակայում է փաստաբան Արմեն Սերյոժայի Հարությունյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքը:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասով, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով և 7-րդ մասով, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Արմեն Սերյոժայի Հարությունյանի (արտոնագիր՝ թիվ 557) նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.1, 2.7.2, 3.5.5, 3.6.1 և 3.8.3 ենթակետերի հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-23021 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

թիվ ԿԳ-23021-2-Ա
26 հոկտեմբերի 2023թ.
ք.Երևան